



NOTICE TO PARENTS, GUARDIANS, PUPILS, TEACHERS AND OTHER STAKEHOLDERS

IMPORTANT INFORMATION ABOUT YOUR COMPLAINT RIGHTS WILLIAMS LEGISLATION

ATTACHMENT A1

Pursuant to *California Education Code Section 35186*, you are hereby notified that:

1. There should be sufficient textbooks and instructional materials. That means each pupil, including English learners, must have a textbook or instructional materials, or both, to use in class and to take home.
2. School facilities must be clean, safe, and maintained in good repair. An adequate number of pupil restrooms should be open, clean, stocked and fully functional.
3. There should be no teacher vacancies or misassignments. There should be a teacher assigned to each class and not a series of substitutes or other temporary teachers. The teacher should have the proper credential to teach the class, including the certification required to teach English learners if present.

Teacher vacancy means a position to which a single designated certificated employee has not been assigned at the beginning of the year for an entire year or, if the position is for a one-semester course, a position to which a single designated certificated employee has not been assigned at the beginning of a semester for an entire semester.

Misassignment means the placement of a certificated employee in a teaching or services position for which the employee does not hold a legally recognized certificate or credential or the placement of a certificated employee in a teaching or services position that the employee is not otherwise authorized by statute to hold.

4. A complaint form may be obtained at the school office, district office, or downloaded from the District's website <http://achieve.lausd.net/eeco>. You may also download a copy of the California Department of Education complaint form from the following website: <http://www.cde.ca.gov/re/cp/uc/>.



ԾԱՆՈՒՑՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻՆ, ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻՆ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՈՒԻԼՅԱՄՍԻ ՕՐԵՆՔ

Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքի 35186 բաժնի համաձայն՝ սույնով ձեզ ծանուցում ենք, որ.

1. Դպրոցներում պետք է լինեն բավարար քանակությամբ դասագրքեր և ուսումնական նյութեր: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր աշակերտ, ներառյալ Անգլերեն սովորողները, պետք է ունենան դասագիրք կամ ուսումնական նյութեր, կամ երկուսն էլ դասարանում օգտագործելու և տուն տանելու համար:
2. Դպրոցական հաստատությունները պետք է լինեն մաքուր, անվտանգ և լավ վերանորոգված: Համարժեք քանակությամբ զուգարաններ աշակերտների համար պետք է լինեն բաց, մաքուր, հագեցած անհրաժեշտ պարագաներով և լիովին գործող:
3. Չպետք է լինեն ուսուցիչների թափուր աշխատատեղեր կամ իրենց սխալ նշանակումներ: Յուրաքանչյուր դասարանի համար պետք է նշանակվի մի ուսուցիչ, այլ ոչ թե մի քանի փոխարինողներ կամ ժամանակավոր ուսուցիչներ: Ուսուցիչը պետք է ունենա պատշաճ որակավորման ապացույց դասավանդելու համար, ներառյալ անհրաժեշտ վկայական՝ Անգլերեն սովորողներին դասավանդելու համար, եթե այդպիսի աշակերտներ կան:

Ուսուցիչ թափուր աշխատատեղը ենթադրում է պաշտոն, որին տարվա սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ տարվա ընթացքում, կամ, կիսամյակային դասընթացի դեպքում, պաշտոն, որին կիսամյակի սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ կիսամյակի ընթացքում:

Սխալ նշանակումը ենթադրում է սերտիֆիկացված աշխատողի նշանակում ուսուցչական կամ ծառայողական պաշտոնում, որի համար աշխատողը չունի օրինականորեն ճանաչված սերտիֆիկատ կամ պատշաճ որակավորման ապացույց, կամ սերտիֆիկացված աշխատողի նշանակում ուսուցչական կամ ծառայողական այն պաշտոնում, որը աշխատողը լիազորված չէ զբաղեցնել, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Բողոքի ձևը կարելի է ձեռք բերել դպրոցի գրասենյակում, Շրջանի գրասենյակում կամ ներբեռնել Շրջանի կայքից՝ <http://achieve.lausd.net/eeco>: Կարող եք նաև ներբեռնել բողոքի ձևի պատճենը Կալիֆոռնիայի կրթության դեպարտամենտի հետևյալ կայքից՝ <http://www.cde.ca.gov/re/cp/uc/>:



**Բողոքի ընթացակարգի միատեսակ ձև (Ուիլյամս)
Ըստ Կրթական օրենսգրքի բաժին 35186-ի բողոքի համար**

DATE STAMP FOR OFFICE USE ONLY:

Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքի (EC) 35186 բաժինը որոշում է ում է ընթացակարգ՝ բողոքների ներկայացման համար՝ կապված հետևյալի հետ. ուսումնական նյութերի պակասություն, հաստատությունների պայմաններ, որոնք չեն պահպանվում մաքուր կամ անվտանգ եղանակով, կամ թերի են վերանորոգման առումով, ինչպես նաև ուսուցիչների թափուր աշխատատեղեր կամ սխալ նշանակումներ: Նման բողոքները կարող են ներկայացվել անանուն: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք պատասխան ստանալ ձեր բողոքին, պետք է ստորև տրամադրեք հետևյալ կոնտակտային տվյալները:

Հայցվում է պատասխան. Այո Ոչ

Անուն (ըստ ցանկության) _____
 Փոստային հասցե (ըստ ցանկության) _____ Քաղաք՝ _____ Ինդեքս՝ _____
 Տան հեռախոսահամար (ըստ ցանկության) _____ Բջջ. (ըստ ցանկության) _____ Աշխատանքային (ըստ ցանկության) _____

Խնդրի հայտնաբերման ամսաթիվ՝ _____ Դպրոցի անվանում՝ _____ Տնօրեն՝ _____

Խնդրի գտնվելու վայր (սենյակի համար, շենք, կամ տեղամաս) _____

Կուրս կամ դասարան՝ _____ Ուսուցչի անուն՝ _____

Բողոքում նշված խնդիրը (խնդրում ենք նշել բոլոր համապատասխան տարբերակները).

1. Դասագրքեր և ուսումնական նյութեր

- Աշակերտը, կամ Անգլերեն սովորողը, չունի ստանդարտներին համապատասխան դասագրքեր կամ ուսումնական նյութեր, կամ նահանգի/Շրջանի կողմից ընդունված դասագրքեր կամ այլ անհրաժեշտ ուսումնական նյութեր, որոնք պետք է օգտագործվեն դասարանում:
- Աշակերտը հնարավորություն չունի օգտվելու դասագրքերից կամ ուսումնական նյութերից տանը կամ դպրոցից դուրս: Դրա համար չի պահանջվում յուրաքանչյուր աշակերտին տրամադրել երկուական դասագիրք կամ ուսումնական նյութ:
- Դասագրքերը կամ ուսումնական նյութերը գտնվում են վատ կամ անօգտագործելի վիճակում. էջերը բացակայում են կամ անընթեռնելի են վնասի պատճառով:
- Դասագրքերի կամ ուսումնական նյութերի պակասը լրացնելու համար աշակերտին տրամադրվել են դասագրքի կամ ուսումնական նյութի որևէ մասի պատճենահանված թերթերը:

2. Ծենքի պայմաններ

- Դպրոցի պայմանները արտակարգ են կամ լուրջ սպառնալիք են ներկայացնում աշակերտների կամ անձնակազմի առողջության կամ անվտանգության համար, ներառյալ նախկինում չբացահայտված վտանգավոր նյութերի վերացումը, որոնք անմիջական սպառնալիք են ներկայացնում աշակերտների կամ անձնակազմի համար, կոտրված պատուհանները կամ արտաքին դռները/դարպասները, որոնք չեն կողպվում, ինչը վտանգ է ստեղծում, էլեկտրամատակարարման խափանումը, գազի արտահոսքը, վնասատուների կամ մակաբույծների զգալի տարածումը, կոյուղու լուրջ խցանումը, չաշխատող օդորակման համակարգերը, հրդեհային ցողիչները, ջեռուցման կամ օդափոխման համակարգերը, շինարարական վնասվածքները, որոնք ստեղծում են վտանգավոր կամ ոչ պիտանի պայմաններ այնտեղ մնալու համար, և Շրջանի կողմից սահմանված ցանկացած այլ արտակարգ իրավիճակը:
- Դպրոցի գույքարանը կանոնավոր կերպով չի սպասարկվում կամ մաքրվում, անսարք է կամ երբեմն չի ապահովվում գույքարանի թղթով, օձառով, թղթե սրբիչներով կամ ձեռքի գործոլ չորացման միջոցով:
- Դպրոցական ժամերին ոչ բոլոր գույքարաններն են բաց լինում, երբ աշակերտները դասարաններից դուրս են, և բավարար քանակությամբ գույքարաններ բաց չեն լինում, երբ աշակերտները դասարանների ներսում են:

3. Ուսուցչի թափուր աշխատատեղ կամ սխալ նշանակում

- Ուսուցչի թափուր աշխատատեղ - Կիսամյակը սկսվել է, և կա ուսուցչի թափուր աշխատատեղ: (Ուսուցչի թափուր աշխատատեղը ենթադրում է պաշտոն, որին տարվա սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ տարվա ընթացքում, կամ, կիսամյակային դասընթացի դեպքում, պաշտոն, որին կիսամյակի սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ կիսամյակի ընթացքում:)
- Անգլերեն սովորողներին դասավանդելու համար նշանակվել է համապատասխան որակավորում չունեցող կամ համապատասխան դասընթաց չանցած ուսուցիչը այն դասարանում, որտեղ աշակերտների 20%-ից ավելին Անգլերեն սովորողներ են:
- Ուսուցիչը նշանակվել է դասավանդելու մի առարկա, որին լիարժեք չի տիրապետում:

Խնդրում ենք մանրամասն նկարագրել ձեր բողոքի պատճառը: Անհրաժեշտության դեպքում կարող եք կցել լրացուցիչ էջեր՝ իրավիճակն ամբողջությամբ նկարագրելու համար. _____

Խնդրում ենք բողոք ներկայացնել տնօրենի գրասենյակ և/կամ ուղարկել այն Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի Կրթության հավասար հնարավորությունների գրասենյակ հետևյալ հասցեով՝ 333 S. Beaudry Avenue - 20th Floor, Los Angeles, CA 90017 : Հեռախոսահամար՝ (213) 241-7682: Ֆաքս՝ (213) 241-3312: